ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԹՅՈՒՐՔԻԱՆ ԴԻՄԱԿՈՎ ԵՎ ԱՌԱՆՑ ԴԻՄԱԿԻ

«Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության փաստաթղթերը»

ՊՐԱԿ II

Գերմանական քաղաքականությունը Թյուրքիայում (1941—1943 թ.թ.)[1]

Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության, նրա ծագման պատճառների ուսումնասիրությունը հսկայական հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն տեսական, այլ և քաղաքական առումով։

Եթե Գերմանական ֆաշիզմը կարողացավ սկսել համաշխարհային պատերազմը և մի քանի տարի շարունակ գազանություններ կատարել խաղաղասեր ժողովուրդների տերիտորիաներում, իր գարշելի կրունկի տակ պահել և շահագործել երկրներ, ապա այդ գործում մեղավոր է ոչ միայն Գերմանիան, այլ և բոլոր այն պետությունները, որոնք գաղտնի կամ լեգալ ճանապարհով օգնեցին Գերմանիային։

Նյուրնբերգյան դատավարությունը ցույց տվեց գերմանա-ֆաշիստական զավթիչների հրեշային պլանները, որի կիրառումը այնքան ծանր նստեց դեմոկրատական երկրների վրա, իրենց խաղաղ աշխատանքով ապրող ժողովուրդների վրա։

Նյուրնբերգյան դատավարության նյութերի վրա ավելացան նաև ՍՍՌ Միության Արտաքին Գործերի Մինիստրության Արխիվային Վարչության տրամադրության տակ գտնվող գերմանական արտաքին գործերի մինիստրության փաստաթղթերը, որոնց II պրակը (36 փաստաթուղթ) վերաբերում է գերմանական քաղաքականությանը Թյուրքիայում 1941—1943 թ. թ.։ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմությունն ուսումնասիրողների համար այդ փաստաթղթերը խոշոր նշանակություն ունեն։ Այդ փաստաթղթերով կարելի է գնահատել ոչ միայն Գերմանիայի, այլ և Թյուրքիայի քաղաքականությունը։ Այժմ հայտնի է դառնում, որ Գերմանիան պատրաստվելով հարձակվել Սովետական Միության վրա, նա միաժամանակ ապահովեց իր թիկունքը Թյուրքիայից, վերջինիս հետ կնքելով գաղտնի պայմանագիր, չնայած այդ պայմանագիրը հակասում էր այն պարտավորություններին, որ Թյուրքիան ուներ Անգլիայի հանդեպ։

Երբ պետք է կնքվեր պայմանագիր Գերմանիայի և Թյուրքիայի միջև, հարկավոր էր ձևակերպում գտնել։ Թյուրքական պրեզիդենտը գերմանական դեսպան Պապենին հանգստացնում է ասելով «քանի որ կա ցանկություն, ապա կգտնվի նաև ձևակերպում» (էջ 7)։ Ուխտադրուժների և քաղաքական ավանտյուրիստների համար ձևակերպում գտնելը դժվար գործ չէր և 1941 թվի հունիսի 18-ին պայմանագիրը կնքվեց, իսկ դրանից երեք օր

---

[1] Հայպետհրատ, 1947 թ., տիրաժ 600, 128 էջ, գինը 6 ռ.

հետո հիտլերյան հորդաները դաղտադողի, հրով ու սրով մտան Սովետական Միության հողը։ Հետաքրքրական է նաև, որ Գերմանիան միաժամանակ բանակցություն է վարում Թյուրքիայի հետ կնքելու դաղտնի պայմանագիր, մի պայմանագիր, որը Գերմանիային հնարավորություն կտար անարգել կերպով դենք և ռազմանյութեր փոխադրել Թյուրքիայի վրայով։

Այդ պայմանագրի կնքման առթիվ Ռիբենտրոպն ասել է՝ «գործնականորեն սա հավասարազոր կլիներ քողարկված ձևով զորքերի որոշ քանակ փոխադրելու թույլտվություն ստանալուն» (էջ 9)։

Փաստաթղթերից երևում է, որ գերմանական դիպլոմատիան շատ էր ժտահոգված այդ պայմանագրի իրագործմամբ, որովհետև դա խոշոր նշանակություն ուներ Գերմանիայի համար երկու պատճառով։ Նախ՝ այդ պայմանագիրը պետք է մի կողմից ուժեղացներ գերմանական ռազմական ագրեսիան Մերձավոր Արևելքում, ստեղծելով իրեն համար նոր պլացդարմ, մյուս կողմից՝ օգտագործելով Թյուրքիան և Իրանը, Գերմանիան կհարձակվեր Սովետական Միության հարավային սահմանների վրա։

Թյուրքիան նույնպես լավ էր հասկանում այդ բանակցությունների իմաստը և իր հերթին մտահոգված էր օգտագործել Գերմանիայի ժամանակավոր հաջողությունները և առաջ քաշել իր նվաճողական-հափշտակողական ձգտումները։

1941 թ. օգոստոսի 5-ին Թյուրքիայի գերմանական դեսպան Պապենը զաղտնի հաղորդում է Բեռլին, թե՝

«...Նկատի ունենալով գերմանացիների հաջողությունները Ռուսաստանում, թյուրքական կառավարական շրջաններն ավելի ու ավելի են սկսում զրաղվել իրենց այն հայրենակիցների վիճակով, որոնք դտնվում են ռուս-թյուրքական սահմանի մյուս կողմը, և առանձնապես ադրբեջանական թյուրքերի վիճակով։ Այդ շրջաններում, ըստ երևույթին, հակամետ են վերադառնալ 1918 թ. դեպքերին և ուզում են իրենց միացնել այդ մարզը, առանձնապես Բաքվի ամենաարժեքավոր նավթի հանքավայրերը» (էջ 29)։

Այնուհետև Պապենը մանրամասն հաղորդում է, թե թյուրքիայի կառավարող շրջաններն ինչպես են նախազծում այդ։ Այդ նույն օրը, այսինքն 1941 թ. օգոստոսի 5-ին, Բեռլինի թյուրքական դեսպանը գերմանական դիպլոմատների ուշադրությունը հրավիրեց՝ «...թյուրքական ցեղերի միջոցով հակասովետական պրոպագանդա մղելու հնարավորության վրա։ Հետո նա բավական անկեղծորեն խոսում էր այն մասին, թե հետագայում կարելի է կովկասյան ժողովուրդներին միավորել մի բուֆերային պետության մեջ, և ակնարկեց, որ Կասպից ծովից դեպի արևելք նույնպես կարող էր մի ինքնուրույն թյուրքական պետություն ծագել» (էջ 35)։ Սա դեռ բոլորը չէ։

«Ջեռոք» թյուրքիան իր պրոպագանդիստներին ուղարկեց Ղրիմի թաթարների մեջ աշխատանք ծավալելու, որի նպատակն էր՝ գործել «ընդհանուր գերմանա-թյուրքական շահերի համար»։

1941 թվի աշնանը Հիտլերը հրավիրում է իր մոտ թյուրքական զեներալներին և հյուրանդավորում նրանց։ Վերջիններս վերադառնալով Անկարա, զեկուցում են իրենց կառավարությանը և հայտնում այն կարծիքը, որ «...ռուսական կամպանիան հիմնականում կարելի է ավարտված հա-

մարել, բացի դիմադրության երեք կետերից, իսկ դիմադրության այդ կետերի լիկվիդացիան կախված է միայն օդերևութաբանական պայմաններից» (էջ 38)։ Ինչպես երևում է, Գերմանիայի ժամանակավոր հաջողությունները գլխապտույտի են բերել ոչ միայն Գերմանիայի, այլև Թյուրքիայի ղեկավարներին, և ինչպես երևում է փաստաթղթերից, Թյուրքական կառավարությունը Գերմանիայի հաղթանակին էլ սպասում էր։ Ահա թե ինչու Պապենը 1942 թ. հունվարի 5-ին հաղորդում է. «Զափազանց բովանդակալից մի զրույցի մեջ, որ ես մի քանի օր սրանից առաջ ունեցա պարոն պրեզիդենտի հետ, բազմրցս նշմարվում էին հավաստիացումներ, թե Թյուրքիան վերին աստիճանի շահագրգռված է ռուսական հսկայի ոչընչացումով և որ ոչ մի պրոպագանդա և ոչ մի ճնշում անգլո-ամերիկյան կողմից ի վիճակի չի լինի դրդել Թյուրքիային անելու թեկուզ և ամենաանշան մի քայլ, որն ուղղված լիներ ի վնաս մեր շահերին։ Ընդհակառակը, պրեզիդենտն ընդգծեց, որ արդեն ներկա մոմենտին Թյուրքիայի չեզոք դիրքը շատ ավելի ձեռնտու է առանցքի երկրների համար, քան Անգլիայի համար» (էջ 50)։ Ինչպես ասում են՝ կոմենտարիաներն ավելորդ են։

Հրապարակված փաստաթղթերից երևում է նաև, որ Թյուրքական բանակի գլխավոր շտաբը Գերմանիայի գլխավոր շտաբի տրամադրության տակ է դրել ռազմական, տնտեսական և քաղաքական կարգի լայն և դագանի ինֆորմացիա՝ Սովետական Միության, ինչպես նաև Անգլիայի և Ամերիկայի մասին։ Մառայությունը փոխադարձ էր։ Գերմանիան իր հերթին Թյուրքիայի տրամադրության տակ է դնում ռազմանյութ, զենք։ Ամբողջ պատերազմի ընթացքում Թյուրքիան Գերմանիային մատակարարեց խրոմ թանգարժեք ռազմական նյութը, որի կարիքը խիստ կերպով զգում էր Գերմանիան, և այդ այն դեպքում, երբ նույն այդ Թյուրքիան, համաձայն պայմանագրի, ռազմական նյութ էր ստանում նաև Անգլիայից ու Ամերիկայից։ Ուրիշ խոսքով՝ այն դեպքում, երբ ազատասեր ժողովուրդները կյանքի և մահու կռիվ էին մղում ֆաշիզմի դեմ, «չեզոք» Թյուրքիան «մի ձեռքով երկու ձմերուկ էր վերցնում»՝ միաժամանակ ռազմական օգնություն ստանալով ինչպես Գերմանիայից, այնպես էլ Անգլիայից ու Ամերիկայից։

Ինչպես գիտենք, 1942 թ. աշնանը գերմանական հորդաները հասան Ստալինգրադի պատերի տակ։ Թյուրքիան այդ ճակատամարտի նշանակությունը շատ լավ էր հասկանում և մեծ հույսեր էր կապել դրա հետ, կարծելով, որ Գերմանիան անպայման հաղթանակ կտանի։

Այդ մասին կա Պապենի վկայությունը. ահա այն՝ գրված 1942 թ. օգոստոսի 26-ին.

«Թյուրքական գլխավոր շտաբը գտնում է,—ասված է հաղորդագրության մեջ,—որ Ստալինգրադի գրավումն այս տարվա պատերազմական գործողությունների վճռողական մոմենտը կհանգիսանա», և դրանից մի քիչ հետո ավելացնում է՝ «Թյուրքիան ինչպես առաջ, այնպես էլ այժմ, ամենավճռական կերպով շահագրգռված է բոլշևիկյան Ռուսաստանի ըստ կարելույն ավելի լիակատար պարտությամբ» (էջ 80—81)։

Ի՞նչ խոսք, որ այս կարգի «չեզոքությունը» Պապենին և նրա տերերին շատ ձեռնտու էր։ Շատ բնորոշ է այն զրույցի բովանդակությունը, որ ունեցել է Պապենը Սարաջօղլուի հետ։

Գապենի գաղտնի հաղորդագրության մեջ (թյուրքական պրեմյեր-մինիստր Սարաջօղլուի հետ ունեցած դրույցի մասին) կարդում ենք. «Իբրև թյուրք, նա (Սարաջօղլուն՝ Խ. Դ.) բուռն կերպով ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը՝ Ռուսաստանի ոչնչացումը հանդիսանում է ֆյուրերի սխրագործությունը, որին հավասարը հարյուրամյակում մեկ անգամ կարող է կատարվել. այդ նաև թյուրքական ժողովրդի վաղեմի իղձն է։ Յուրաքանչյուր թյուրք, նույնիսկ անգլիացիների համար գրող Ցալչինը, չի կարող այդ մասին մտածել այլ կերպ, քան ինքը՝ Նորերս ունեցած իր ելույթում, որով նա արտահայտեց իր նվիրվածությունը թյուրքիզմի գաղափարին, նա ուզում էր կողմնակի կերպով մատնանշել այդ բանը։ Ռուսական պրոբլեմը կարող է լուծվել Գերմանիայի կողմից, եթե միայն սպանվի Ռուսաստանում ապրող բոլոր ռուսների առնվազն կեսը, եթե այսուհետև ռուսական ազդեցության տակից մի անգամ ընդմիշտ հանվեն ռուսացված մարդկերը, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնությունները, և եթե այս մարդերը դրվեն սեփական ոտքերի վրա, ներգրավվեն կամավոր համագործակցության մեջ առանցքի տերությունների հետ և դաստիարակվեն որպես սլավոնության թշնամիներ։ Ինչ վերաբերում է ռուսական մարդկային պոտենցիալի դդալի մասի ոչնչացմանը, ապա դաշնակիցներն ամենաճշմարիտ ճանապարհով են ընթանում։ Թե ինչ է որոշել ֆյուրերն ազգային փոքրամասնություններով բնակեցված մարզերի ապագա կառուցվածքի մասին, իրեն հայտնի չէ։ Այդ մարդերի բնակչության գերակշռող մեծամասնությունը բաղկացած է թյուրքական ժողովուրդներից, և այդ պատճառով Թյուրքիան օրինական շահ ունի այդ հարցի լուծման մեջ» (էջ 86—87)։

Կարելի է բերել բազմաթիվ այլ փաստաթղթեր, սակայն այսքանն էլ բավական է, որպեսզի մեր ընթերցողը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում «չեզոքությամբ» դիմակավորված թյուրքիային տեսնի առանց դիմակի, իր իսկական դեմքով։

Գետհրատը խրախուսելի գործ է կատարել հրատարակելով այդ պրակը, սակայն վատ չէր լինի, եթե հրատարակվեին նաև փաստաթղթերի մնացած պրակները, որոնք վերաբերում են մյուս պետություններին։

Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ